ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ռուսերենի (ТРКИ) թեստավորմանը նախապատրաստվելու համար

ԵՐԵՎԱՆ-2026

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը նախատեսված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային ծառայության այն թեկնածուների համար, որոնց պաշտոնի անձնագրով սահմանված է ռուսերենի իմացության միջին կամ ավելի ցածր մակարդակի պահանջ:

Օտար լեզվի իմացության բավարար մակարդակը ստուգվում է Ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպվող թեստի միջոցով:

Թեստավորման նպատակն է գնահատել դիմորդի լեզվական կարողությունները՝ ռուսերենով տեղեկատվություն ընկալելու, ճիշտ լեզվական կառուցվածքներ կիրառելու, պաշտոնական և մասնագիտական բառապաշար օգտագործելու, ինչպես նաև գրավոր հաղորդակցություն իրականացնելու տեսանկյունից:

Թեստավորման հաջող արդյունքի համար կարևոր է ոչ միայն հիշել քերականական կանոնները, այլև կարողանալ դրանք կիրառել պաշտոնական հաղորդակցական իրավիճակներում: Ուստի խորհուրդ է տրվում յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունից հետո կատարել թեստային առաջադրանքներ, վերլուծել սխալները և կրկնել այն թեմաները, որոնցում թույլ են տրվել առավել շատ սխալներ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հարկային և մաքսային ոլորտի մասնագիտական բառապաշարին, քանի որ այն կարող է կիրառվել թեստավորման առաջադրանքներում:

1. **Ռուսերենի քերականություն** (Лексика и грамматика)

- գոյականի հոլովներ,
- ածականի ձևեր,
- դերանուններ,
- թվականներ,
- բայի ժամանակներ,
- բայի կատարյալ և անկատար տեսակներ,
- շարժման բայեր,
- նախդիրների ճիշտ կիրառություն,
- շաղկապներ,
- նախադասության կառուցվածք:

2. Բառապաշար

- առօրյա հաղորդակցություն,
- պետական ծառայություն,
- գործարար հաղորդակցություն,
- հարկային և մաքսային ոլորտ,
- պաշտոնական փաստաթղթեր,
- իրավական տերմինաբանություն:

3. **Ընթերցանություն**

Թեկնածուն պետք է կարողանա հասկանալ.

- պաշտոնական գրություններ,
- հրամաններ,
- տեղեկանքներ,

- հայտարարություններ,
- ծառայողական նամակներ,
- տեղեկատվական հոդվածներ:

4. **Լեզվական կիրառություն**
   Թեստում կարող են հանդիպել.

- բաց թողնված բառերի լրացում,
- ճիշտ բառաձևի ընտրություն,
- սխալների հայտնաբերում,
- նախադասությունների վերակազմություն,
- բառերի համապատասխանեցում,
- կարճ տեքստի ըմբռնում:

Թեստին հաջող մասնակցելու համար խորհուրդ է տրվում կրկնել միջին կամ ավելի ցածր մակարդակի ռուսերենի ամբողջ քերականությունը: Անհրաժեշտ է յուրացնել առնվազն 1500–2000 ընդհանուր և մասնագիտական բառապաշար: Կարևոր է սովորել հարկային և մաքսային ոլորտների հիմնական տերմինները: Խորհուրդ է տրվում կատարել ТРКИ ձևաչափի թեստեր՝ քննության կառուցվածքին և առաջադրանքների տեսակներին ծանոթանալու համար: Օգտակար է կարդալ ռուսերեն պաշտոնական փաստաթղթեր և լրատվական նյութեր՝ լեզվական հմտություններն ամրապնդելու նպատակով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառերի հոլովմանը և բայերի ճիշտ կիրառությանը:

Թեստավորման ընթացքում խորհուրդ է տրվում նախ պատասխանել առավել հեշտ հարցերին՝ ժամանակը արդյունավետ օգտագործելու նպատակով: Անհրաժեշտ է ուշադիր կարդալ յուրաքանչյուր առաջադրանքի պայմանը՝ սխալ մեկնաբանություններից խուսափելու համար: Խորհուրդ է տրվում բացառել ակնհայտ սխալ պատասխանները, ինչը կբարձրացնի ճիշտ տարբերակի ընտրության հավանականությունը: Կարևոր է ժամանակը բաշխել հավասարաչափ՝ բոլոր առաջադրանքներին հասցնելու համար: Թեստի ավարտին նպատակահարմար է կրկին ստուգել բոլոր պատասխանները՝ հնարավոր վրիպակները հայտնաբերելու և ուղղելու նպատակով:

Առաջարկվող ուսումնական գրականություն

Թեստավորմանը նախապատրաստվելու համար դիմորդներին խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ գրականությունից.

1. **Հայաստանի հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի դասագրքեր**
   Թեստավորման հիմքում դրված լեզվական գիտելիքների զգալի մասը համապատասխանում է ՀՀ հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի ուսումնական ծրագրին: Խորհուրդ է տրվում կրկնել.

- **«Ռուսաց լեզու» 5-րդ դասարան** https://lib.armedu.am/files/resource/files/2024-08-27/c83ae3d4130d9e906d4c0695b9eb0a2b.pdf
- **«Ռուսաց լեզու» 6-րդ դասարան** https://lib.armedu.am/files/resource/files/2024-11-29/cd61ab65eca90cbda8b0bbded0e4fd32.pdf

- **«Ռուսաց լեզու» 7-րդ դասարան** https://lib.armedu.am/files/resource/files/2024-08-27/0d6945f02c89a856b480ab71e48af708.pdf
- **«Ռուսաց լեզու» 8-րդ դասարան** https://lib.armedu.am/files/resource/files/2025-05-19/c7a170a9f6a72d1664b3b761b0a59ed4.pdf
- **«Ռուսաց լեզու» 9-րդ դասարան** https://lib.armedu.am/files/resource/files/2025-05-19/cbf2806fca45304c75734bc34cc97710.pdf

2. Առցանց ուսումնական ռեսուրսներ

Նախապատրաստման ընթացքում նպատակահարմար է օգտվել նաև.

- ՀՀ-ում երաշխավորված հանրակրթական դասագրքերի ցանկից և էլեկտրոնային ուսումնական նյութերից:
- ՏՐԿԻ նմուշային թեստերից և ուսումնական նյութերից, որոնք հրապարակվում են ռուսաց լեզվի ուսուցմամբ զբաղվող առաջատար բուհերի և կենտրոնների կողմից:

Անվճար ՏՐԿԻ նմուշային և տիպային թեստեր կարող եք գտնել ու ներբեռնել Санкт-Петербургский государственный университет (СПбГУ) կայքի նյութերի բաժնից, որոնք ներառում են բոլոր մակարդակների ցուցադրական և պաշտոնական առաջադրանքները:

Հասանելի մակարդակներ և նյութեր

Элементарный уровень (ТЭУ / A1)

Типовой тест (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Элементарный уровень (ТЭУ / A1) (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Элементарный уровень (ТЭУ / A1) Вариант 2 (.pdf)

Базовый уровень (ТБУ / A2)

Типовой тест (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Базовый уровень (ТБУ / A2) (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Базовый уровень (ТБУ / A2) Вариант 2 (.pdf)

Первый уровень (ТРКИ-I / B1)

Типовой тест (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Первый уровень (ТРКИ-I / B1) (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Первый уровень (ТРКИ-I / B1) Вариант 2 (.pdf)

Второй уровень (ТРКИ-II / B2)

Типовой тест (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Второй уровень (ТРКИ-II / B2) (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Второй уровень (ТРКИ-II / B2) Вариант 2 (.pdf)

Третий уровень (ТРКИ-III / C1)

Типовой тест (.pdf)

Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Третий уровень (ТРКИ-III / C1) Вариант 1 (.pdf)
Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Третий уровень (ТРКИ-III / C1) Вариант 2 (.pdf)

Четвертый уровень (ТРКИ-IV / C2)

Типовой тест (.pdf)
Демонстрационный тест, разработанный в СПбГУ. Четвертый уровень (ТРКИ-IV / C2) (.pdf)

Образцы тестовых блоков по уровням https://www.pushkin.institute/certificates/cct/tests-online/

3. Մասնագիտական բառապաշար

Դիմորդներին խորհուրդ է տրվում յուրացնել հետևյալ թեմաներով բառապաշարը.

- պետական կառավարում,
- հարկային վարչարարություն,
- մաքսային վարչարարություն,
- պետական ծառայություն,
- գործավարություն,
- իրավաբանական տերմինաբանություն,
- ծառայողական կարգապահություն,
- ֆինանսներ,
- հաշվապահություն,
- բողոքարկում,
- պետական մարմինների գործունեություն:

Առավել հաճախ հանդիպող մասնագիտական բառեր

Ռուսերեն	Հայերեն
налог	հարկ
сбор	տուրք
декларация	հայտարարագիր
уведомление	ծանուցում
проверка	ստուգում
инспектор	տեսուչ
налогоплательщик	հարկ վճարող
плательщик	վճարող
пошлина	մաքսատուրք
импорт	ներմուծում
экспорт	արտահանում
выпуск товаров	ապրանքների բացթողնում
таможенный контроль	մաքսային հսկողություն
административное производство	վարչական վարույթ

служебная дисциплина	ծառայողական կարգապահություն
жалоба	բողոք
обжалование	բողոքարկում
законодательство	օրենսդրություն
служебная тайна	ծառայողական գաղտնիք
изменение	փոփոխություն
адрес	հասցե
хранить	պահպանել
иметь право	ունենալ իրավունք
обязан соблюдать	պարտավոր է պահպանել
обязан сообщить	պարտավոր է տեղեկացնել
представить документы	ներկայացնել փաստաթղթեր
составить акт	կազմել ակտ
провести проверку	անցկացնել ստուգում
принять решение	ընդունել որոշում
обжаловать решение	բողոքարկել որոշումը
в соответствии с законодательством	օրենսդրությանը համապատասխան

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ թեմաներին.

- գոյականի հոլովներ,
- ածականի ձևեր,
- դերանուններ,
- թվականներ,
- բայի ժամանակներ,
- բայի կատարյալ և անկատար տեսակներ,
- շարժման բայեր,
- նախդիրների կիրառություն,
- բարդ նախադասություններ,
- պաշտոնական և գործարար խոսք,
- ընթերցանություն և տեքստի ըմբռնում: